ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 16-Ի ԱԺՈ-267-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՆԱԽԱԳԾԻ (ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ԿՈԴ՝ Պ-214-14.12.2017-ՊԻՄԻ-012/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

	Առաջարկության փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի եզրակացությունը)	Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
	1	2	3	4	5
1.	**Պատգամավոր Կարինե Աճեմյան**	նախագծի 1-ին հոդվածում	1.«որոշման» բառից հետո լրացնել «հավելվածի» բառը, իսկ «այսուհետ՝ Որոշում» բառերը փոխարինել «այսոհետ՝ Հավելված» բառերով: 2.Նույն տեղում՝ հավելվածի նոր խմբագրությամբ շարադրված 88-րդ կետի 2-րդ նախադասության «Լսումների» բառից հետո լրացնել «հրավիրման» բառը:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
2.	**Պատգամավոր Էդմոն Մարուքյան**	նախագծի 1-ին հոդվածում	Հավելվածի նոր խմբագրությամբ շարադրված 88-րդ կետի 2-րդ նախադասության «կայքում» բառից հետո լրացնել «, իսկ լսումների վերաբերյալ տեղեկատվությունը դրանց անցկացման օրվանից առնվազն երեք աշխատանքային օր առաջ տրամադրվում է զանգվածային լրատվության միջոցներին:» նախադասությունը:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**

3.	**Պատգամավոր Կարինե Աճեմյան**	Նախագծի 2-րդ և 3-րդ հոդվածներում	«Որոշման» բառը փոխարինել «Հավելվածի» բառով:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
4.	**Պատգամավոր Արփինե Հովհաննիսյան**	Նախագծի 3-րդ հոդվածում	«Ազգային ժողովի նախագահի համաձայնությամբ:» բառերը փոխարնել «Ազգային ժողովի նախագահին իրազեկելով:» բառերով:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**